# ԿԻՕՏՕ

Արևի տակ երկար թափառելուց սաստիկ ցաւում էր գլուխս:

Հիւրանոցում հրաժարւեցի ընդհանուր ընթրիքից պատշգամբում, որովհետեւ անգլիական սովորութեամբ բոլոր կանայք ներկայանալու են զուգած դեկօլտէով, ինչպէս եւ տղամարդիկ ֆրակով: Անկողնիս շղարշէ ծածկոցը հրաւիրում էր ինձ հանգստանալու իր հովանու տակ օրւայ տպաւորութիւններից եւ մոծակների խայթերից, որոնցով վխտում է գեղեցիկ Ճապոնը:

Այդ վայրկեանին էր, որ բաղխեցին դուռս:

—Մտէ՛ք:

Սեմի վրա երեւաց ճապոնացու կերպարանքը, թեւի տակ մի կապոց սեղմած, ու դեռ դուռը բոլորովին չը փակած, սկսեց իր բարեւները: Վերջը մի քայլ առաջ գալով մեկնեց ինձ իր քարտը, որտեղից իմացայ, թէ նա զանազան հազւագիւտ առարկաների վաճառական է: Վաճառականը հէնց այնտեղ էլ բաց արեց իր կապոցը, ուր խիտ իրար կից դարսւած էին փոքրիկ արկղիկներ, թէյամաններ ու պնակներ եւ ուրիշ այս տեսակ իրեր:

Այս բոլորը դուրս հանեց նա հանգիստ ու անվրդով, շարեց կարգով յատակի վրա ու վերջն էլ դարձաւ դէպի ինձ հարցական նայւածքով:

Բայց հէնց այդ վայրկեանին կրկին լսեցի, որ դուռս ծեծեցին:

—Մտէ՛ք,— գոչեցի ես, զարմանալով, թէ սա ո՞վ է լինելու:

Դրանը երեւաց մի նոր կերպարանք, իր նոր կապոցով, որ